

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ	3
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ	8
3.1. Բյուջեի եկամուտները	9
3.2. Բյուջեի ծախսերը	13
3.3. Բյուջեի պակասուրդը	17
3.4. Հարկաբյուջետային կանոնների պահպանումը	18
4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	19
5. ԱՄՓՈՓՈՒՄ	21

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. խոր անկումից հետո Հայաստանը 2021թ. սկսել է որոշ չափով վերականգնվել: Այնուամենայնիվ, տնտեսության վրա բացասական ցնցումների ազդեցության և դրանց կառավարման ցածր արդյունավետության պայմաններում տնտեսությունում գրանցված խոր ճգնաժամի հետևանքները, ցավոք, շարունակել են մնալ նաև 2021 թվականի ընթացքում: Մասնավորապես, նախորդ տարիներից առկա տնտեսական, սոցիալական, քաղաքական և բարոյահոգեբանական խոչընդոտների զգալի մասը շարունակում է բացասաբար անդրադառնալ ի հայտ եկած ցնցումներին արձագանքման և երկրում ստեղծված իրավիճակի կայունացման հարցում: Երկրում կուտակված անվտանգային և մակրոտնտեսական ռիսկերի պահպանվող բարձր մակարդակը և ՀՀ կառավարության կողմից այդ ռիսկերի նվազեցմանն ու չեզոքացմանն ուղղված քաղաքականության միջոցառումների ոչ լիարժեք և հաճախ ժամանակավրեպ իրագործումը հետաձգում է ՀՀ տնտեսության վերականգնման հեռանկարները:

Այս պարագայում կարևոր նշանակություն ունի կառավարության հավասարակշռված, մասնագիտական գիտելիքի ու հմտությունների վրա հիմնված և իրավիճակին համարժեք գործողությունների իրականացումը, ինչը թույլ կտա մեղմել արտաքին և ներքին ցնցումների ազդեցությունը և հնարավորինս խուսափել անցանկալի հետևանքներից: Այդ գործողությունների իրականացումը, ինչպես նաև դրանց քանակական ցուցանիշները արտացոլվում են երկրի պետական բյուջեում:

Սույն վերլուծությունը նպատակ ունի ՀՀ կառավարության ներկայացրած «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման վերլուծություն» ուսումնասիրության հիման վրա պարզել, թե կառավարությունն ինչպիսի՞ գործողություններ է ձեռնարկել, ինչպե՞ս է արձագանքել ՀՀ առջև ծագած մարտահրավերներին, ինչպես նաև փորձել գնահատական տալ, թե կառավարությունն ի՞նչ չափով է կարողացել մեղմել վերոհիշյալ ցնցումների ազդեցությունը:

2020 թվականի ընթացքում տեղի ունեցած աննախադեպ բացասական ցնցումներ պարունակող զարգացումները, մասնավորապես համավարակի հետևանքներով առաջացած իրավիճակը և Արցախյան պատերազմը, հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգով դիտարկվել էին որպես բացառիկ դեպքեր, ինչը թույլ էր տվել կառավարությանը շեղվել հարկաբյուջետային կանոնների պահպանումից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականին «բացառիկ դեպքի» կարգավորումների հիմք դարձած գործոնների տնտեսական և հարկաբյուջետային հետևանքները դեռևս չէին հաղթահարվել և անհրաժեշտ էր հարկաբյուջետային քաղաքականության

հակազդող միջոցառումների շարունակությունը՝ 2021 թվականի համար ևս սահմանվել էր պահպանել այդ կարգավորումները: Որպես հետևանք՝ կառավարությունը 2021 թվականին ևս (ինչպես 2020 թվականին) չի պահպանել հարկաբյուջետային կանոնները՝ իրականացնելով տնտեսական հնարավորությունները գերազանցող ընթացիկ ծախսեր՝ դրանց մի մասը ֆինանսավորելով պարտքի միջոցով:

2021 թվականի ընթացքում, չնայած իրական համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճին և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորմանը, ավելացել է ՀՀ պետական պարտքը: Մասնավորապես, ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 60.3% և, չնայած նախորդ տարվա համեմատ նվազել է 3.2 տոկոսային կետով, այնուամենայնիվ, շարունակում է գերազանցել հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% առավելագույն շեմին:

Ընթացիկ ծախսերի և բյուջեի պակասուրդի աճը, ի թիվս մի շարք պատճառների, պայմանավորված էր նաև կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացմամբ:

Շարունակում է մտահոգիչ մնալ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (կապիտալ ծախսեր) առանց այդ էլ ցածր մակարդակի շարունակական նվազումը (2021թ. դրանք կազմել են 218.4 մլրդ դրամ (ընդհանուր ծախսերի 10.8%-ը)՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.1 տոկոսային կետով):

Վերլուծության համար հիմք են ծառայել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված՝ 2021թ. պետական բյուջեի հաշվետվությունը, իսկ մակրոտնտեսական զարգացումների նկարագրության համար հիմք են ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված ցուցանիշները:


2. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ

Համաշխարհային տնտեսությունը (այդ թվում՝ ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունները) 2021 թվականին 2020թ. համավարակի պատճառով գրանցված անկումից հետո թևակոխել է տնտեսական աճի վերականգնման փուլ: Այնուամենայնիվ, մի շարք գործոնների ազդեցությամբ (այդ թվում՝ այն, որ առաջարկի գործող սահմանափակումների պայմաններում համաշխարհային պահանջարկը վերականգնվել է առաջարկի նկատմամբ առաջանցիկ տեմպերով) միջազգային շուկաներում գրանցվել են բարձր գնաճային միտումներ:

ՀՀ տնտեսությունը ևս 2020 թվականի համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով գրանցված տնտեսական անկումից հետո 2021 թվականին թևակոխեց վերականգնման փուլ՝ գրանցելով 5.7% տնտեսական աճ: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ տնտեսական անկումը 2020 թվականին կազմել էր 7.4%, ՀՆԱ-ի 2019թ. մակարդակը վերականգնելու համար պահանջվում է, որ այն 2020-ի համեմատ աճի շուրջ 8 տոկոսով:

Այս իմաստով, թերևս, տեղին է Հայաստանի ցուցանիշները համեմատել տարածաշրջանի երկրների ցուցանիշների հետ:

Գծապատկեր 1. Տարածաշրջանի երկրների տնտեսական աճը¹



¹ Գծապատկերը կառուցվել է www.visualcapitalist.com (<https://advisor.visualcapitalist.com/gdp-growth-by-country-in-2021/>):

Աղյուսակում ներկայացվող տարածաշրջանային վեց երկրների համեմատությունը ցույց է տալիս, որ բացի Հայաստանից, մյուս բոլոր երկրներում 2021թ. իրական ՀՆԱ-ն արդեն իսկ գերազանցում է 2019թ. մակարդակին:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ 2021թ. տվյալներով Հայաստանի ՀՆԱ-ի 11.3 տոկոսն ապահովող գյուղատնտեսությունում (գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում վերջին տարիներին շարունակաբար նվազում է, օրինակ՝ 2014թ. կազմել է 18.1 տոկոս²) նախորդ տարվա համեմատ արձանագրվել է 0.6% անկում: Գյուղատնտեսության անկումն էականորեն պայմանավորված է եղել սահմանամերձ գյուղատնտեսական շրջաններում ռազմական լարվածությամբ, երաշտով, ինչպես նաև ՀՀ-ում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի ցածր արդյունավետությամբ:


Հարկ է նշել, որ ՀՀ տնտեսությանը (ինչպես և համաշխարհային տնտեսությանը) 2021թ. բնորոշ է եղել այն, որ ներքին պահանջարկը վերականգնվել է առաջարկի համեմատ առաջանցիկ տեմպերով: Դա թերևս հանդիսացել է այն հիմնական պատճառներից մեկը, որի հետևանքով գրանցվել են բարձր գնաճային միտումներ, որոնք ամենայն հավանականությամբ կպահպանվեն նաև առաջիկայում:

2021թ. անվանական ՀՆԱ-ն կազմել է 6,982.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 6,181.7 մլրդ դրամի նկատմամբ ավելանալով շուրջ 801.1 մլրդ դրամով:

2021թ. իրական ՀՆԱ-ի 5.7% աճը պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների աճով՝ (նպաստումը՝ 4.0 տոկոսային կետ): Արդյունաբերությունը և շինարարությունը ևս աճել են՝ նպաստելով տնտեսական աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 0.8 և 0.2 տոկոսային կետեր): Մինչդեռ գյուղատնտեսության անկումը բացասաբար է ազդել տնտեսական աճի վրա (նպաստումը՝ -0.2 տոկոսային կետ):

² Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:

Գծապատկեր 2. Տնտեսության ճյուղերի նպաստումները տնտեսական աճին, տոկոսային կետ



2021 թվականին ծառայություններն աճել են 7.8%-ով՝ հիմնականում պայմանավորված «կացության և հանրային սննդի կազմակերպում» (նպաստումը՝ 3.9 տոկոսային կետ), «տրանսպորտ» (նպաստումը՝ 2.6 տոկոսային կետ), «առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում» (նպաստումը՝ 2.4 տոկոսային կետ), ինչպես նաև «տեղեկատվություն և կապ» (նպաստումը՝ 2.1 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճով, իսկ առևտրի 7.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 6.2 տոկոսային կետ): «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի նվազումը հակազդել է ընդհանուր ծառայությունների աճին (նպաստումը՝ -6.3 տոկոսային կետ):

Արդյունաբերության համախառն թողարկումն աճել է 3.3%-ով (նպաստումը ՀՆԱ-ին՝ 0.8 տոկոսային կետ), ինչը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության և «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղի աճով:

Շինարարության ճյուղում գրանցված 7.4% աճը (նպաստումը ՀՆԱ-ին՝ 0.2 տոկոսային կետ) պայմանավորված է եղել հիմնականում կազմակերպությունների, համայնքների և բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով:

2021 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի աճով:

2021 թվականին սպառումն իրական արտահայտությամբ աճել է 4.2%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնավոր հատվածի սպառման աճով, որին նպաստել են 2020 թվականի ընթացքում կուտակված խնայողությունների բարձր մակարդակը և տնօրինվող եկամտի (այդ թվում՝ արտերկրից ներհոսող դրամական

փոխանցումների) աճը: Պետական սպառումը ևս աճել է՝ նպաստելով ընդհանուր սպառման աճին: Սպառման վերականգման վրա բացասական ազդեցություն է ունեցել սպառողական վարկավորման նվազումը: Այնուամենայնիվ, հարկ է նշել՝ քանի որ սպառումը 2020թ. նվազել էր 10.9%-ով, հետևաբար 2019 թվականի մակարդակը վերականգնվելու համար այն պետք է աճեր ավելի քան 12.3%-ով: Այսինքն՝ սպառման ծավալների փաստացի տեմպերով աճի դեպքում, այլ հավասար պայմաններում, 2019 թվականի մակարդակին հասնելու համար կպահանջվեր առնվազն 3-4 տարի:


Հաշվետու ժամանակահատվածում կապիտալ ներդրումները նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել են 7.9%-ով՝ պայմանավորված ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ներդրումների աճով³: Նույն կերպ, հարկ է նշել՝ քանի որ ներդրումները 2020թ. նվազել էին 8.6%-ով, 2019 թվականի մակարդակը վերականգնվելու համար այն պետք է աճեր ավելի քան 9.4%-ով:

Թերևս նույն դատողությունները կարելի է անել ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման իրական ծավալների համար. դրանք 2021 թվականին աճել են համապատասխանաբար 16.5% և 11.5%-ով, սակայն, քանի որ 2020 թվականին դրանց անկումը եղել է անհամեմատ ավելի մեծ (համապատասխանաբար՝ 33.5 և 31.5 տոկոս), 2019 թվականի մակարդակին հասնելու համար, այլ հավասար պայմաններում, բավական երկար ժամանակ կպահանջվի:

2021 թվականին ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է գների աճի արագացում: Այս հանգամանքը պայմանավորված է եղել մի կողմից՝ առաջարկի (միջազգային ապրանքահումքային շուկաներում դրսևորված գների աճ, բեռնափոխադրումների սակագների աճ, տարվա առաջին կեսին նախորդ համադրելի ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամի արժեզրկված դիրք), մյուս կողմից՝ պահանջարկի գործոններով (մասնավոր սպառման աճ, գնաճային սպասումների ավելացում): Հանրապետությունում 12-ամսյա գնաճը տարեվերջին կազմել է 7.7%, իսկ միջին գնաճը՝ 7.2%: Միջին գնաճին առավելապես նպաստել է «սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 11.2% գների աճը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 2021 թվականի սննդամթերքի գնաճը միայն պայմանավորված չէ համաշխարհային շուկայում պարենի գների բարձրացմամբ՝ այս հարցում զգալի «դերակատարում» ունեն նաև Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում առկա մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ խնդիրները և գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության ոչ բավարար արդյունավետությունը:

³ Ներկայացված է հիմնական միջոցների համախառն կուտակում ցուցանիշը՝ հաշվի առնելով, որ 2019 թվականից ՀՀ ՎԿ-ի կողմից համախառն կուտակման մեջ հաշվառվող նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության մեջ ներառվում են նաև վիճակագրական շեղումները:

Գծապատկեր 3. 2021թ. գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ




Այսպիսով, 2021թ. ՀՀ տնտեսությունը դեռևս չի վերականգնվել (չի հասել նախաճգնաժամային մակարդակին): Տնտեսական գործընթացների դանդաղման ֆոնին՝ տնտեսության ներուժի վերականգնման հրամայականը ևս վտանգված է, մի կողմից՝ պայմանավորված պետական ներդրումների (կապիտալ ծախսերի) թերակատարմամբ, մյուս կողմից՝ դրա արդյունքում տնտեսության վրա ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության սպասվածից ավելի զսպող ազդեցությամբ: Այս պայմաններում ՀՀ բնակչության կենսամակարդակի բարելավում ևս չի նկատվում՝ ոչ միայն կառավարության չափից ավելի զսպող քաղաքականության, այլև բարձր գնաճային միջավայրի և այն արդյունավետ չկառավարելու հետևանքով քաղաքացիների իրական եկամուտների զգալի կրճատման պատճառով:

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

2021 թվականին հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են եղել հարկաբյուջետային կայունության ապահովումը, նպաստումը տնտեսական վերականգնմանը և COVID-19-ի համավարակի ու Արցախյան պատերազմի հետևանքների էական մեղմումը: Մասնավորապես, հարկաբյուջետային դիրքը եղել է խթանող, սակայն այն 2020 թվականի համեմատությամբ նվազել է, ինչի արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի (դիրքի փոփոխություն կամ ազդակ) վրա եղել է զսպող:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի հիմնական ցուցանիշները 2016-2021 թվականներին




2021 թվականի տարեկան արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների անվանական մեծությունը կազմել է 1,683.8 մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 2,004.3 մլրդ դրամ:

2021 թվականին նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 5.8%-ով կամ 109.7 մլրդ դրամով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով:

2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 320.5 մլրդ դրամ (ծրագրի 89.2%-ը):

2021 թվականի ընթացքում պետական բյուջեի պակասուրդը շարունակել է բարձր մնալ պատմական միջինից, սակայն նախորդ տարվա համեմատությամբ ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը զսպող ազդեցություն է ունեցել:

Գծապատկեր 5. Հարկաբյուջետային դիրքը և ազդակը




Մասնավորապես, ինչպես «պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ», այնպես էլ «առաջնային պակասուրդ/ՀՆԱ» ցուցանիշները շարունակել են գերազանցել վերջին 10 տարիների միջին ցուցանիշին: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2021 թվականին նախորդ տարվա համեմատ ունեցել է 1.6 (պլանավորված 1.1-ի փոխարեն) զսպող ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների (0.5), և՛ ծախսերի զսպող (1.2) ազդեցություններով: Ընդ որում, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ընդհանուր առմամբ սպասվածից ավելի զսպող է, ինչը հիմնականում պայմանավորված է եղել բյուջեով սպասվածից ավելի բարձր տնտեսական աճի և դրան համապատասխան ծախսերի ավելացված չլինելու հանգամանքով:

3.1 Բյուջեի եկամուտները

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտներն աճել են՝ պայմանավորված տնտեսության որոշ չափով վերականգնման և հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում հարկային եկամուտների աճով: 2021 թվականի տարեկան արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների անվանական մեծությունը կազմել է 1,683.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 7.9%-ով: «ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտներ/ՀՆԱ» հարաբերակցությունը 2021 թվականի ընթացքում նվազել է (24.1%՝ նախորդ տարվա 25.2%-ի դիմաց), ինչի հիմնական պատճառը ըստ պաշտոնական

մեկնաբանության այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների նվազումն է: Իրականում պաշտոնական դրամաշնորհների նվազումը (2020 թվականի համեմատ շուրջ 4.3 անգամ) խորհելու լուրջ տեղիք է տալիս: Մասնավորապես, սովորաբար, դրամաշնորհային ծրագրերով հաջորդ փուլի իրականացման համար հատկացվող դրամաշնորհային միջոցների ծավալի նվազումը կարող է վկայել տվյալ ծրագրի իրականացման նախորդ փուլում նախատեսված աշխատանքների (միջոցառումների) թերի (ոչ լիարժեք) կատարման մասին:

Գծապատկեր 6. Պետական բյուջեի եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 2016-2021 թվականներին, % ՀՆԱ-ում



2021 թվականին հարկերի և տուրքերի ընդհանուր ծավալը կազմել է 1,586.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.6%-ով՝ պայմանավորված հիմնականում հարկման բազաների (հիմնականում սպառման և ներմուծման աճի հաշվին) վերականգնմամբ, ինչպես նաև դրոշմանիշային վճարի և արտահանման տուրքի ներդրմամբ: Հարկ է նշել, որ այդ աճի մեջ զգալի է գնաճի «դերը»:

Հարկերի և տուրքերի ընդհանուր ծավալը կազմել է ՀՆԱ-ի 22.7%-ը՝ նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.3 տոկոսային կետով: Այդպիսի աճը դրական երևույթ է հետզհետե ժամային առաջին տարվա համար, սակայն, համեմատած 2019թ. արձանագրված էական աճի հետ, կարելի է եզրակացնել, որ սովերային հատվածի կրճատման (հարկային վարչարարության բարելավման) տեմպը 2021թ. զգալիորեն դանդաղել է:

Հաշվետվությունում նշվում է, որ 2021 թվականին նախորդ տարվա համեմատ այլ եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ նվազել են 0.8 տոկոսային կետով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 0.7 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է համեմատվող տարում դրանց բարձր ցուցանիշների արձանագրմամբ (այլ

եկամուտների մասով՝ 2020 թվականին «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե մուտքագրված միջոցներով, իսկ դրամաշնորհների մասով՝ 2020 թվականին համավարակի պայմաններում դոնորներից ստացված դրամաշնորհներով):

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտների ծավալը և կատարողականը 2021 թվականին (մլրդ դրամ)

	Տարեկան պլան ⁴	Տարեկան ճշտված պլան ⁵	Փաստացի	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,509.5	1,690.2	1,683.8	99.6%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,440.1	1,583.6	1,586.9	100.2%
Պաշտոնական դրամաշնորհներ	24.3	19.6	12.4	63.1%
Այլ եկամուտներ	45.1	87.0	84.6	97.2%

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստացի	2021թ. փաստացի	Աճը 2020թ. նկատմամբ (%)	Նպաստում (2021թ.), տոկոսային կեստ
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,385.2	1,586.9	14.6	14.6
1. Հարկային եկամուտներ	1,351.8	1,520.0	12.4	12.2
Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)	471.6	556.0	17.9	6.1
Ակցիզային հարկ	123.6	113.1	-8.5	-0.8
Շահութահարկ	148.8	158.6	6.6	0.7
Մաքսատուրք	68.3	84.8	24.2	1.2
Եկամտային հարկ	411.5	426.3	3.6	1.1
Շրջանառության հարկ	26.6	32.4	21.8	0.4
Սոցիալական վճար	24.8	43.0	73.4	1.3

⁴ Հաստատված է «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

⁵ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

Բնապահպանական հարկ և քնօգտագործման վճար	53.1	62.7	18.1	0.7
Այլ հարկային եկամուտներ	24.0	47.2	96.7	1.6
2. Պետական տուրք	33.5	66.9	100.0%	2.4

2021 թվականին «բյուջեի հարկային եկամուտներ և պետական տուրքեր» ցուցանիշի աճին ամենամեծ նպաստումը (6.1 տոկոսային կետ) ունեցել է ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), որն ապահովել է բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր ծավալի 35%-ը: Նախորդ տարվա համեմատ աճին առավելապես նպաստել են երկու հանգամանք՝ 2020 թվականին տնտեսության վրա համավարակի և Արցախյան պատերազմի ունեցած բացասական ազդեցության աստիճանական հաղթահարումը (մասնավորապես 2021 թվականին արձանագրվել է ինչպես ՀՀ ներմուծվող ապրանքներից, այնպես էլ ՀՀ-ում արտադրվող ապրանքների ու ծառայությունների շրջանառությունից ստացված մուտքերի աճ) և 2021 թվականին արձանագրված բարձր գնաճը (սպառողական գների 7.2% և ներմուծման գների 10.9% աճ):

Հարկային եկամուտների աճին երկրորդ մեծ նպաստումը (2.4 տոկոսային կետ) ունեցել են պետական տուրքերը (66.9 մլրդ դրամ): Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի գծով մուտքերի կրկնակի աճը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի աճով: Մասնավորապես, 2021 թվականի սեպտեմբերից պղնձի և մոլիբդենի խտահանք արտահանելու համար սահմանվել է պետական տուրք, որի գծով պետական բյուջե է մուտքագրվել 24.6 մլրդ դրամ: Փաստորեն, պետական տուրքերի գծով մուտքերի 100%-ով աճի 72.7 տոկոսային կետը այդ արտահանման տուրքի սահմանման շնորհիվ է:

«Բյուջեի հարկային եկամուտներ և պետական տուրքեր» ցուցանիշի աճին հաջորդ մեծ նպաստումը (1.6 տոկոսային կետ) ունեցել է այլ հարկային եկամուտների աճը: 2021 թվականին այլ հարկային եկամուտների գծով մուտքերը կազմել են 47.2 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 30.7 մլրդ դրամ են կազմել զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման համար գանձվող դրոշմանիշային վճարները (նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 3.4 անգամ կամ 21.6 մլրդ դրամով): Աճը հիմնականում պայմանավորված է 2021 թվականի հունվարի 1-ից օրենքում կատարված փոփոխությունների համաձայն դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացմամբ: Հատկանշական է, որ այլ հարկային եկամուտների 96.7%-ով աճի 90 տոկոսային կետը դրոշմանիշային վճարների գծով մուտքերի կտրուկ աճի շնորհիվ է:

2021 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են 12.4 մլրդ դրամ

պաշտոնական դրամաշնորհներ (տարեկան ճշտված ծրագրի 63.1%-ը), ինչը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 76.7%-ով:

Տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 84.6 մլրդ դրամ՝ 97.2%-ով ապահովելով տարեկան ճշտված պլանի ցուցանիշը:

3.2 Բյուջեի ծախսերը

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերում 1.1 տոկոսային կետով ավելացել է ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը և նույնքան նվազել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը: 2021 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը անվանական արժեքով կազմել են 2,004.3 մլրդ դրամ: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 1,788.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.2%-ով: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2020 թվականի նկատմամբ նվազել է 1.9 տոկոսային կետով՝ կազմելով 28.7%, որտեղ ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 25.6%:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (կապիտալ ծախսերի) կշիռը ՀՆԱ-ում նվազել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 3.1%: Շարունակել են թերակատարվել կապիտալ ծախսերը (հաշվետվությունում որպես ձեռքբերում է նշվում այն հանգամանքը, որ կապիտալ ծախսերի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ նախորդ տարվա 84.9%-ից հասել է 92.5%-ի): Մինչդեռ լուրջ խորհելու տեղիք է տալիս այն հանգամանքը, որ ընթացիկ ծախսերի 7.2%-ով աճին զուգահեռ կապիտալ ծախսերը նվազել են 4.1%-ով:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը և կատարողականը 2021 թվականին (մլրդ դրամ)


	2020թ. փաստացի	2021թ. պլան	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ	2021թ. 2020-ի նկատմամբ
Ընդամենը ծախսեր	1,894.6	1,850.9	2,049.3	2,004.3	97.8%	105.8%
Ընթացիկ ծախսեր	1,668.5	1634.6	1,814.1	1,788.0	98.6%	107.2%
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	226.2	216.3	235.2	216.3	92.0%	95.6%

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի ճշտված ծրագրից շեղման ընդհանուր գումարի (45 մլրդ դրամի) 58%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 42%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

ՀՀ 2021 թվականին պետական բյուջեից կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների նվազեցման և վերացման նպատակով իրականացված միջոցառումների գծով հատկացված միջոցների ծավալը կազմել է 54.6 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.8 տոկոս: Այդ թվում՝ սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմման ուղղությամբ կատարվել են շուրջ 48.8 մլրդ դրամի ծախսեր (ներառյալ՝ առողջապահական ծրագրերին ուղղված 36.4 մլրդ դրամի և տնտեսական աջակցության ծրագրերի 11.5 մլրդ դրամի ծախսերը): Եվս 5.8 մլրդ դրամ հատկացվել է վարկավորման գծով:

Արցախյան պատերազմի հետևանքների հակազդման ուղղությամբ իրականացված ծախսերը կազմել են շուրջ 68.9 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի մեջ կազմում է 1.0 տոկոս: Այս ծախսերում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են 64.9 մլրդ դրամ (94.2%):

Գծապատկեր 7. Պետական բյուջեի ծախսերը 2016-2021 թվականներին, % ՀՆԱ-ում



Պետական բյուջեի ծախսերի կատարողականը ճշտված պլանի համեմատ կազմել է 97.8%, իսկ բյուջեի սկզբնական պլանի համեմատ՝ 108.3% (դա հիմնականում պայմանավորված է ընթացիկ ծախսերի գերակատարմամբ, որն էլ իր հերթին սպասվածից ավելի հարկային եկամուտներն ընթացիկ ծախսերին ուղղելու հետևանք է):

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի կատարողականը 2021 թվականի ընթացքում բարելավվել է՝ ճշտված ծրագրի նկատմամբ կազմելով 92.5%՝ նախորդ տարվա 84.9%-ի համեմատ: Ընդ որում, պետական բյուջեի կատարողականը տարեկան պլանի նկատմամբ կազմել է 101%: Հատկանշական է, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականը (առանց պետական բյուջեի համաֆինանսավորման) ևս բարելավվել է՝ ճշտված պլանի նկատմամբ կազմելով 88.1%

(2020 թվականին այդ ցուցանիշը կազմել էր 56.7%):

Աղյուսակ 4-ում և 5-ում ներկայացված են ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգմամբ:

Աղյուսակ 4. ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերը (մլրդ դրամ)

	2020թ. փաս- տացի	2021թ. պլան	2021թ. ճշտված պլան	2021թ. փաս- տացի	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ
Ընթացիկ ծախսեր	1,668.5	1,634.6	1,814.1	1,788.0	98.6%
Աշխատավարձ	176.1	182.8	183.4	181.4	98.9%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	179.2	200.2	203.7	198.5	97.4%
Տոկոսավճարներ	164.8	194.7	181.6	180.8	99.6%
Սուբսիդիաներ	119.1	125.5	138.7	136.8	98.6%
Դրամաշնորհներ	186.9	165.4	210.8	204.7	97.1%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	559.1	527.9	625.3	621.2	99.3%
Այլ ծախսեր	283.4	238.2	270.5	264.6	97.8%

Աղյուսակ 5. ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ ացի	2021թ. պլան	2021թ. ճշտված պլան	2021թ. փաս- տացի	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատ- մամբ	2021թ. 2020-ի նկատ- մամբ
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	226.2	216.3	235.2	216.3	92.0%	95.6%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	227.7	216.3	236.1	218.4	92.5%	95.9%
արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրեր	44.3	83.3	91.2	80.6	88.3%	182.0%
ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրեր	183.4	133.0	144.9	137.8	95.1%	75.1%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(1.5)	(0.0)	(0.8)	(2.1)	250.8%	136.8%

Աղյուսակ 6-ում ներկայացված են ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ գործառնական դասակարգմամբ:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի ծախսերի կատարողականը գործառնական դասակարգմամբ (մլրդ դրամ)

	2020թ. փաս- տացի	2021թ. պլան	2021թ. ճշտված պլան	2021թ. փաս- տացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ	Աճը 2020-ի նկատմամբ, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,894.6	1,850.9	2,049.3	2,004.3	97.8%	5.8
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	344.3	397.1	389.0	381.0	97.9%	10.7
Պաշտպանություն	387.8	312.2	336.5	336.0	99.8%	-13.4
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	151.4	156.6	167.1	160.0	95.7%	5.7
Տնտեսական հարաբերություններ	125.6	148.9	164.4	151.8	92.3%	20.9
Շրջակա միջավայրի պաշտպանություն	4.4	10.9	8.0	6.0	75.4%	36.4
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	8.9	14.7	11.6	9.5	82.5%	6.7
Առողջապահություն	148.2	117.5	161.9	160.5	99.1%	8.3
Հանգիստ, մշակույթ և կրոն	33.6	30.6	31.2	30.4	97.5%	-9.5
Կրթություն	143.8	153.6	152.5	149.1	97.8%	3.7
Սոցիալական պաշտպանություն	546.6	504.9	626.6	620.0	99.0%	13.4
Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր	-	3.9	0.6	-	-	-

Աղյուսակ 6-ից երևում է, որ ծախսային բոլոր խմբերում ծախսերը թերակատարվել են:

2021թ. պետական բյուջեի ծախսերի թերակատարումը շարունակում է մտահոգությունների առիթ լինել: Մասնավորապես, բյուջեի ընդհանուր ծախսերը ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 2.2%-ով կամ 45 մլրդ դրամով: Բյուջեի ընթացիկ ծախսերը հաշվետու տարվա ընթացքում 179.6 մլրդ դրամի չափով ճշգրտվել են դեպի վերև, որից կատարվել է միայն 153.5 մլրդ դրամի չափով ծախս, իսկ 26.1 մլրդ դրամի չափով ծախսերը չեն իրականացվել՝ հանգեցնելով բյուջեի ճշտված պլանի նկատմամբ փաստացի ընթացիկ ծախսերի 1.4%-ով թերակատարման:


Հատկանշական է, որ եզակի չեն դեպքերը, երբ պետական բյուջեի վերանայումից հետո փաստացի կատարողականը, միևնույն է, շարունակում է հապես շեղվել պլանային մեծություններից: Մասնավորապես, օրինակ՝ ծախսերի պլանի դեպի վերև վերանայում է իրականացվել «տնտեսական հարաբերություններին» ուղղվող ծախսերի գծով, որոնց գծով նախատեսված 148.9 մլրդ դրամ գումարը ճշտվել է 15.5 մլրդ դրամով և կազմել 164.4 մլրդ դրամ, սակայն փաստացի կատարվել են նախքան վերանայումը պլանավորված մեծությանը բավական մոտ ծախսեր՝ 151.8 մլրդ դրամ: Սա կարող է վկայել պլանավորման և պլանի վերանայման փուլերում որոշ տեղեկատվական ու կադրային խնդիրների առկայության մասին:

Ինչ վերաբերում է քննարկվող ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի կառուցվածքային փոփոխությանը, ապա պետք է նկատենք, որ 2020թ. համեմատ կապիտալ ծախսերի կշիռն ընդհանուր ծախսերի կառուցվածքում նվազել է 1.1 տոկոսային կետով, և կապիտալ ծախսերը ընթացիկ ծախսերի հետ ունեցել են համապատասխանաբար 10.8% և 89.2% համամասնություն: Կապիտալ ծախսերի կշռի նվազումը ևս մեկ անգամ արտացոլում է տնտեսության երկարաժամկետ աճին և ներուժի վերականգնմանն ուղղվող ծախսերի անարդյունավետ կառավարման փաստը:

3.3 Բյուջեի պակասուրդը

Ինչպես նշվեց, 2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 320.5 մլրդ դրամ (ծրագրի 89.2%-ը):

Գծապատկեր 8. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները (մլրդ դրամ)



Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականին կազմել է 4.6%՝ կանխատեսված 5.3%-ի դիմաց: Հատկանշական է, որ 2020 թվականի համեմատ այդ ցուցանիշի 0.8 տոկոսային կետով նվազման մեջ ՀՆԱ-ի աճի նպաստումը կազմել է 0.3, իսկ բյուջեի դեֆիցիտի կրճատման նպաստումը՝ 0.5 տոկոսային կետ:

2020 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի պակասուրդն ամբողջությամբ ֆինանսավորվել էր ներքին աղբյուրների հաշվին, ապա 2021 թվականին առավելապես (68.4%-ով) ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից՝ պայմանավորված արտարժույթային պետական պարտատոմսերի թողարկմամբ: Հաշվետվությունում նշվում է, որ 2021 թվականին Հայաստանի Հանրապետությունը միջազգային կապիտալի շուկայում հաջողությամբ տեղաբաշխել է 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով արտարժույթային պետական պարտատոմսեր: Դա, իհարկե, կարող է վկայել կապիտալի միջազգային շուկայում ձևավորված բարենպաստ միջավայրի, թողարկվող պարտատոմսերի նկատմամբ բարձր պահանջարկի ու պարտատոմսերի ցածր եկամտաբերության մասին, սակայն չպետք է անտեսել այն փաստը, որ դրանով ավելացվում է պետական պարտքի մեջ արտաքին պետական պարտքի տեսակարար կշիռը, ինչը տարբեր պատճառներով ցանկալի չէ:

Հաշվետվությունում իրավացիորեն նշվում է, որ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի փոքր մեծությունը պայմանավորված է արտաքին վարկատուների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի կատարողականով, սակայն չի ընդգծվում կատարողականի ցածր մակարդակի համար կառավարության պատասխանատու լինելու հանգամանքը:

3.4 Հարկաբյուջետային կանոնների պահպանումը

2021 թվականին «բացառիկ դեպքի» կարգավորումների ներքո պետական բյուջեի կատարումը շարունակել է շեղվել հարկաբյուջետային կանոնների բնականոն իրավիճակների տրամաբանությունից: Մասնավորապես, այն հիմնավորմամբ, որ 2020 թվականին «բացառիկ դեպքի» կարգավորումների հիմք հանդիսացած գործոնների՝ COVID-19-ի համավարակի և Արցախյան պատերազմի տնտեսական և հարկաբյուջետային հետևանքները ամբողջությամբ հաղթահարված չէին, 2021 թվականի համար ևս սահմանվել էր այդ կարգավորումների պահպանում և բնականոն իրավիճակներում գործող կանոններին համապատասխանության անցում 2022 թվականից: Արդյունքում բյուջեի պակասուրդը շարունակել է գերազանցել կապիտալ ծախսերին, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպին: Այնուամենայնիվ, շեղումների չափը երկու դեպքում էլ որոշակիորեն կրճատվել է, հատկապես ընթացիկ ծախսերի համապատասխանության գծով՝ ՀՆԱ 3.3%-ից նվազելով մինչև 2.4%:

4. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,429.6 մլրդ դրամ (9,225.6 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ նախորդ տարեվերջի համեմատ ՀՀ պետական պարտքի ցուցանիշներն աճել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար 6.4%-ով և 15.8%-ով: Դա պայմանավորված է եղել 2020 թվականի և 2021 թվականի դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքների տարբերությամբ, որը փոփոխվել է 8.1%-ով՝ 522.59-ից նվազելով մինչև 480.14: ՀՀ պետական պարտքում 3,192.2 մլրդ դրամը (6,648.4 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 1,237.4 մլրդ դրամը (2,577.2 մլն ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը:

Աղյուսակ 7. ՀՀ պետական պարտքը

	Առ 31.12.2020թ.	Առ 31.12.2021թ.	Փոփո- խություն (%)	Տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքում, (%)
<i>(մլրդ դրամ)</i>				
ՀՀ պետական պարտք	4,164.3	4,429.6	6.4	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	3,923.9	4,209.8	7.3	95.0
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	2,926.2	2,972.4	1.6	67.1
- ՀՀ կառավարության ներքին պարտք	997.6	1,237.4	24.0	27.9
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	240.4	219.8	(8.6)	5.0
<i>(մլն ԱՄՆ դոլար)</i>				
ՀՀ պետական պարտք	7,968.5	9,225.6	15.8	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	7,508.5	8,767.9	16.8	95.0
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	5,599.5	6,190.7	10.6	67.1
- ՀՀ կառավարության ներքին պարտք	1,909.0	2,577.2	35.0	27.9
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	459.9	457.7	(0.5)	5.0

Աղյուսակ 7-ից երևում է, որ ՀՀ պետական պարտքում 4,209.8 մլրդ դրամը (8,767.9 մլն ԱՄՆ դոլարը) կամ ամբողջ պետական պարտքի 95.0%-ը կազմել է ՀՀ կառավարության պարտքը, 219.8 մլրդ դրամը (457.7 մլն ԱՄՆ դոլարը) կամ ամբողջ պետական պարտքի 5.0%-ը՝ ՀՀ ԿԲ պարտքը:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 265.3 մլրդ դրամով (1,257.2 մլն ԱՄՆ դոլարով): Դա պայմանավորված է եղել կառավարության պարտքի աճով, որն աճել է

7.3%-ով, իսկ ՀՀ ԿԲ-ի արտաքին պարտքը նվազել է 8.6%-ով: Դոլարային արտահայտությամբ՝ կառավարության պարտքն աճել է 16.8%-ով, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը նվազել 0.5%-ով: Այսինքն՝ ՀՀ պետական պարտքն ավելի զգայուն է դարձել փոխարժեքի հնարավոր տատանումների նկատմամբ:

Չնայած 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա համեմատ նվազել է 3.9 տոկոսային կետով, այն դեռևս գտնվում է բավական անցանկալի մակարդակի վրա՝ կազմելով ՀՆԱ-ի 63.4%-ը: Ընդ որում կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 60.3%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.2 տոկոսային կետով: Այս նվազումը հիմնականում պայմանավորվել է ՀՀ դրամի արժևորմամբ և ՀՆԱ իրական աճով, մինչդեռ հարկաբյուջետային քաղաքականության դիրքը շարունակել է մնալ պարտքի բեռի աճին նպաստող գործոն: Վերոհիշյալ 3.2 տոկոսային կետով նվազմանը -4.6 տոկոսային կետով նպաստել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը, -3.2 տոկոսային կետով՝ տնտեսական աճը, 2.7 տոկոսային կետով՝ իրական տոկոսադրույքի նվազումը (անվանական տոկոսադրույքի նվազման և գնաճի պատճառով): Առաջնային պակասուրդը և պետական բյուջեից զուտ վարկավորումը կազմել են ՀՆԱ-ում 2-ական տոկոս՝ համապատասխան չափով չեզոքացնելով դրամի արժևորումից և ՀՆԱ աճից եկող դրական ազդեցությունները:

2021 թվականին ևս գործող «բացառիկ դեպքի» կարգավորումները հնարավորություն են տվել կառավարությանը ներգրավված պարտքն առավելապես օգտագործելու ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար: Դրա արդյունքում, պարտքի աճը չի նպաստել տնտեսության ներուժի բարձրացմանը, այլ պարզապես պարտքի գումարները ուղղվել են ընթացիկ ծախսերի իրականացմանը՝ չստեղծելով հետագա տարիներին պարտքի մարման հնարավորություններ: Առաջիկայում «պարտք/ՀՆԱ հարաբերակցության» էական բարելավում դժվար է ակնկալել, քանի որ այս դեպքում ՀՆԱ-ի աճը չի արագանում պարտքի ներգրավման պայմաններում:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

- **2020թ. խոր անկումից հետո Հայաստանը 2021թ. սկսել է որոշ չափով վերականգնվել, սակայն բացասական ցնցումների ազդեցության և դրանց կառավարման ցածր արդյունավետության պայմաններում ճգնաժամի հետևանքները շարունակել են զգացվել նաև 2021 թվականի ընթացքում:**

Այսպես, չնայած գրանցված 5.7% տնտեսական աճին, ՀՆԱ-ի 2019թ. մակարդակը վերականգնելու համար պահանջվում էր շուրջ 2.3 տոկոսային կետով բարձր տնտեսական աճի տեմպ: Մինչդեռ, տարածաշրջանային երկրների (Վրաստան, Ադրբեջան, ՌԴ, Թուրքիա, Իրան) հետ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ երկրների 2021թ. ՀՆԱ-ն արդեն իսկ գերազանցում է 2019-ի մակարդակին:

Տնտեսական աճի կառուցվածքը ևս բավական մտահոգիչ է՝ այն իմաստով, որ այն ապահովվել է հիմնականում համախառն պահանջարկի աճի հաշվին, մինչդեռ մեծածավալ ներդրումներով պայմանավորված տնտեսական աճի նախադրյալներն իսպառ բացակայում են: Մյուս կողմից՝ տնտեսության արտահանելի հատվածի աճի տեմպերը գոհացուցիչ չեն. անկում է գրանցվել գյուղատնտեսությունում, իսկ արդյունաբերության աճն աննշան է: Փոխարենը, աճը համեմատաբար բարձր է ոչ արտահանելի հատվածի այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ առևտուրը և ծառայությունները: Արդյունքում վտանգված է տնտեսության ոչ միայն վերականգնման, այլև ներուժի ընդլայնման և տնտեսության կառուցվածքի առողջացման հեռանկարը:

- **Մտահոգիչ է այն հանգամանքը, որ «ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտներ/ՀՆԱ» հարաբերակցությունը 2021 թվականի ընթացքում նվազել է:**

Չնայած հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճին՝ ընդհանուր եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը անկում է ապրել՝ նվազեցնելով կառավարության ծախսեր կատարելու հնարավորությունները: Ըստ պաշտոնական մեկնաբանության, դրա հիմնական պատճառը այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների նվազումն է (2020 թվականի համեմատ՝ շուրջ 4.3 անգամ): Պաշտոնական դրամաշնորհների կտրուկ նվազումը մտահոգիչ է այնքանով, որ այն առավել հաճախ կարող է վկայել դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախորդ փուլերում ծրագրերի թերի (ոչ լիարժեք) կատարման մասին:

- **Չնայած պետական բյուջեի ծախսերի աճին՝ կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը պահպանվել է նաև հետճգնաժամային տարում:**

Փաստորեն, աճել են միայն բյուջեի ընթացիկ ծախսերը (որոնց դրական ազդեցությունը տնտեսական վերականգնմանը անուղղակի է), իսկ կապիտալ ծախսերը, ընդհակառակը, շարունակել են նվազել: Այս թերացումը, թերևս, կարող է մեկնաբանվել այսպես՝ կապիտալ ծախսերի նվազումը ազդել է տնտեսական աճի տեմպի վրա և դանդաղեցրել այն: Նախորդ տարվա համեմատ տնտեսությանն ուղղվող կապիտալ ծրագրերի ծավալի նվազումն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ կառավարության կողմից կապիտալ ծախսերի իրականացման անկարողության խնդիրը դեռևս չի լուծվել:

• **Չնայած կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի 2021թ. արձանագրված նվազմանը (ի դեպ, այն դեռևս շարունակում է գերազանցել հարկաբյուջետային կանոններով սահմանված առավելագույն շեմին)՝ մտահոգիչ է ծախսերի կառուցվածքի վատթարացումը:**

Խոսքը ընթացիկ ծախսերի տեսակարար կշռի աճի և կապիտալ ծախսերի նույնքան նվազման մասին է: Ավելին, 2020 թվականից շարունակվող ընթացիկ ծախսերի գծով անհրաժեշտ վերանայումներ չիրականացնելու և ընթացիկ ծախսերը պարտքով ֆինանսավորելու գործելակերպի պատճառով վերցված պարտքը վերջին տարիներին չի ուղղվել տնտեսության ներուժի վերականգնման և ընդլայնման համար նախատեսված ծախսերի կատարմանը, ինչը լրացուցիչ եկամուտ կստեղծեր պարտքի հետագա սպասարկումը և մարումն ապահովելու համար: Նման գործելակերպը շարունակելու պարագայում (ընթացիկ ծախսերի պարտքով ֆինանսավորում, կապիտալ ծախսերի թերակատարում) վտանգված կլինեն թե՛ հարկաբյուջետային կայունության ապահովումը և թե՛ կառավարության տնտեսական զարգացմանն ուղղված գործունեության արդյունավետությունը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: